

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ԱՆ պրորբացիայի ծառայության 2019 թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում իրականացրած գործունեության վերաբերյալ

ՀՀ ԱՆ պրորբացիայի ծառայությունը բաղկացած է 11 տարածքային մարմիններից, որոնք գործում են Հայաստանի Հանրապետության մարզերում /թվով 10/ և Երևան քաղաքում: Մարզային բաժիններն ունեն 27 նստավայր:

Պրորբացիայի ծառայությունն իրականացնում է ազատությունից զրկելու հետ չկապված քրեական պատիժներ՝ տուգանքը, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, հանրային աշխատանքները, իրականացնում է վերահսկողություն պատժից պայմանական վաղաժամկետ ազատված, պատիժը պայմանականորեն չկիրառված և հղի կանանց կամ մինչև 3 տարեկան երեխա ունեցող կամ այլ հիմքերով պատիժը հետաձգված անձանց նկատմամբ, ինչպես նաև կազմում և ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներին ներկայացնում է զեկույցներ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ:

Ծառայությունում 2019թ-ի առաջին կիսամյակի ընթացքում գրանցվել են հետևյալ քանակությամբ պատիժներ և վերահսկողություններ, զեկույցներ՝

| | Պատիժների և վերահսկողությունների տեսակները և քանակները | | | | | | | Ընդամենը |
|---------------------|--|-------------------|-------------------|-----------------------|----------------|-------------------|-----------------|----------|
| | Տուգանք | Որոշակի պաշտոններ | Հանրային աշխատանք | Պատիժը պայմ. չկիրառել | Վարքի վերահսկ. | Պատժից պ/վ ազատել | Պատժի հետաձգում | |
| 2018թ.-ից փոխանցված | 511 | 298 | 178 | 1278 | 3 | 40 | 12 | 2320 |
| 2019թ.-ին ստացված | 151 | 90 | 16 | 163 | 2 | 92 | 1 | 515 |
| Ընդամենը | 662 | 388 | 194 | 1441 | 5 | 132 | 13 | 2835 |

| Զեկույցներ | |
|-----------------------|-----|
| 2018թ.-ից . փոխանցված | 493 |
| 2019թ.-ին . ստացված | 407 |
| Ընդամենը | 900 |

Ծառայությունում 2019թ-ի առաջին կիսամյակի ընթացքում հաշվառվել է **2729** շահառու, որոնցից 226-ը կանայք են, 31-ը անչափահաս, իսկ 22-ը օտարերկրյա քաղաքացիներ: Նրանց նկատմամբ նշանակվել է 1244 պատիժ, 1591 վերահսկողություն, ընդ որում 106 շահառու ունի կրկնակի պատիժ կամ վերահսկողություն:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներից ստացվել է զեկույց տրամադրելու վերաբերյալ 900 ծանուցում, որոնցից 30-ը կանայք են:

Ծառայությունում 2019թ-ի առաջին կիսամյակի ընթացքում արխիվացվել է 1558 անձնական գործ, որից 96 զեկույց, ընթացքի մեջ է 2067 անձնական գործ, որից 804 զեկույց:

Պրորազիայի ծառայությունում 01.07.2019թ.-ի դրությամբ համաներումը կիրառվել է **2805** շահառուի նկատմամբ, որից 943-ը 2019թ.-ի առաջին եռամսյակի ընթացքում, իսկ 151 երկրորդ եռամսյակի ընթացքում:

1. Տուգանք. 662 շահառուի նկատմամբ նշանակված տուգանք պատժատեսակի ընդհանուր գումարը կազմում է 289.641.150 ՀՀ դրամ, որից 73 տուգանքը փաստացի կատարվել է, փաստացի գանձված գումարը կազմում է 38.990.000 ՀՀ դրամ, իսկ մասնակի գանձվել է 4.078.400 ՀՀ դրամ, ընդհանուրը 43.068.400 ՀՀ դրամ: 251 տուգանք գտնվում է միջնորդություն ներկայացնելու ժամկետի մեջ, որոնց գումարը կազմում է 103.849.350 ՀՀ դրամ, 43 տուգանք տարաժամկետված է, որոնց գումարի չվճարված մասը կազմում է 15.120.300 ՀՀ դրամ, 7 տուգանքի կատարումը հետաձգվել է, որոնց չվճարված գումարը կազմում է 2.995.000 ՀՀ դրամ, 2 տուգանքի կատարումը կասեցվել է, որոնց գումարը կազմում է 900.000 ՀՀ դրամ (բողոքարկված է), 38 շահառուի մոտ տուգանքի կատարումը դադարեցվել է նոր հանցանք կատարելու փաստով (կալանավորվել են), ընդհանուր գումարը՝ 19.574.000 ՀՀ դրամ, 239 տուգանք կարճվել է, որոնց չվճարված գումարը կազմում է 99.294.100 ՀՀ դրամ (4-ը մահ,16-ը վաղեմություն, **219-ը համաներում**):

Ծառայությունում փաստացի ընթացքի մեջ է 341 տուգանք, որոնց գումարի չվճարված մասը կազմում է 142.438.650 ՀՀ դրամ:

662 տուգանք պատժից 65-ը նշանակվել է կանանց, 1-ը անչափահասի, իսկ 5-ը օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ:

2. Հանրային աշխատանքներ. Հաշվետու ժամանակաշրջանում հանրային աշխատանքների ձևով պատիժ է նշանակվել 194 շահառուի նկատմամբ, որից 70 անձնական գործ գտնվում է ընթացքի մեջ և որոնցից ներկայումս աշխատում են 25-ը, 8-ի վերաբերյալ կնքվում են պայմանագրեր, իսկ 37-ը՝ չեն աշխատում (10-ը հետախուզում, 10-ի վերաբերյալ ներկայացվել է պատիժը փոխարինելու վերաբերյալ միջնորդություն, 14-ը բողոքարկվել է վերաքննիչ դատարան, 3-ը պատիժը ըննհատված է), 15 հանրային աշխատանքներ փաստացի կատարվել են, 55-ի պատիժը կասեցվել է (55-ը գտնվում են ազատազրկման մեջ), 38-ի պատիժը կարճվել է (2-ը մահ, 1-ը դատարանի որոշմամբ, **33-ը համաներում**, 2-ը վաղեմություն), 15 շահառուի պատիժը դադարեցվել է նոր հանցանք կատարելու փաստով (կալանավորվել են), մեկ դատապարտյալի նկատմամբ նշանակված հանրային աշխատանքները բաժնի միջնորդության հիման վրա փոխարինվել է ազատազրկմամբ:

194 հանրային աշխատանքներ պատժատեսակից 7-ը նշանակվել է կանանց նկատմամբ:

Հանրային աշխատանքների պատժատեսակի իրականացումն ապահովելու և այն առավել հանրագուտ դարձնելու նպատակով Պրոբացիայի ծառայության բաժինները համագործակցում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հետ, որոնց հետ կնքվում են պայմանագրեր, հետագա գործընթացի կազմակերպման նպատակով:

3. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու ձևով պատիժ կրող շահառուների թիվը կազմում է 388, որոնցից 299-ի գործերը գտնվում են ընթացքի մեջ, հաշվառումից հանվել են 83 շահառու՝ պատիժը փաստացի կատարելու հիմքով, 3-ը կասեցված է դատարանի որոշմամբ, 2 անձնական գործ կարճվել է՝ 1-ը շահառուի մահվան հիմքով, իսկ **1-ի նկատմամբ կիրառվել է համաներում**, որպես հիմնական պատիժ:

388 որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու ձևով պատժից 35-ը նշանակվել են կանանց նկատմամբ, իսկ 3-ը օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ:

388 որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու ձևով պատժից 276-ը վերաբերվում են տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելուն, իսկ 112-ը՝ այլ գործունեությունից:

4.Վերահսկողություններ. 1441 շահառուի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, որոնցից ընթացքի մեջ են 412-ը, 155-ի նկատմամբ սահմանված փորձաշրջանի ժամկետը փաստացի ավարտվել է, 848-ի փորձաշրջանը կարճվել է (1-ը նոր դատավճիռ, 2-ը մահվան հիմքով, 42-ը օրենքի փոփոխությամբ, **803-ը համաներմամբ**), 21-ի նկատմամբ փորձաշրջանը դադարեցվել է նոր հանցանք կատարելու հիմքով (կալանավորվել են), 5-ի փորձաշրջանը վերացվել է բաժնի միջնորդության հիման վրա:

1441 փորձաշրջանից 120-ը նշանակվել են կանանց, 24-ը՝ անչափահասների, իսկ 6-ը օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ:

Փորձաշրջանի մեջ գտնվող 14 շահառու զորակոչվել է պարտադիր զինվորական ծառայության, իսկ 35 շահառուի անձնական գործերը ստացվել են ՀՀ ՊՆ տարբեր զորամասերից:

Վերահսկողությունից խուսափող 29 շահառու գտնվում է հետախուզման մեջ:

- Ծառայությունում հաշվառված 5 անչափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է կիրառվել է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց:

- Ազատագրվման ձևով նշանակված պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատված դատապարտյալներից պրոբացիայի ծառայությունում, ըստ ստացված որոշումների, հաշվառվել է 132 շահառու, որոնցից 75-ի նկատմամբ վերահսկողությունն ընթացքի մեջ է, 19-ը՝ փաստացի ավարտվել է, իսկ 3-ի շահառուի նկատմամբ վերահսկողությունը դադարեցվել է նոր հանցանք կատարելու փաստի հիման վրա (կալանավորվել են), 1-ի վերահսկողությունը կարճվել է մահվան հիմքով, **32 շահառուի նկատմամբ կիրառվել է համաներում** և նրանց նկատմամբ վերահսկողությունը

դադարեցվել է և 1-ի պատժից պայմանականորեն վաղաժամկետ ազատելը վերացվել է, բաժնի միջնորդության հիման վրա և կիրառվել է ազատագրկում:

Պատժից պայմանական վաղաժամկետ ազատվածներից 123-ը տղամարդ են, իսկ 9-ը կին:

- Պրոբացիայի ծառայությունում հաշվառված են պատժի կրումը հետաձգված 13 շահառու, որոնցից 12-ի պատիժը հետաձգված է հիվանդության պատճառով, 1-ը ունի մինչև 3 տարեկան երեխա:

Պատժի կրումը հետաձգված 7 շահառուի նկատմամբ վերահսկողությունը կարճվել է՝ 1-ը վաղեմության հիմքով, իսկ **6 շահառուի նկատմամբ կիրառվել է համաներում:**

Պատժի կրումը հետաձգված 13 շահառուից 11-ը տղամարդ են, իսկ 2-ը կին:

Ձեկույց

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ զեկույցներ տրամադրելու վերաբերյալ 900 անձնական գործերից, 407 ծանուցումները ստացվել է 2019թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում:

Ներկայումս ընթացքի մեջ է 804 անձնական գործ, 96-ը արխիվացվել է, 712 զեկույցներով ներկայացվել է եզրակացություն՝ (222-ը դրական, 490-ը բացասական):